ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«08» հոկտեմբերի 2013թ. N 88-Ա

ք. Արմավիր

ՍՐԱՊԻՈՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2.2-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 01/13/1/3139-13 գրությունը և Սրապիոն Մարտիրոսյանի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի դիմումը.

կարգադրում ենք՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 63-3.1-18) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Սրապիոն Մարտիրոսյանի հետ 2013 թվականի հոկտեմբերի 8-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ